

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-ԻՆ  
ԺԱՄԸ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ` ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ  
ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

---

**քաղ. Երևան**  
**Մասնակցում էին`**

***Խորհրդի անդամներ`***

Տ. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Ն. Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ

***Հրավիրվածներ`***

Ա. Մարտիրոսյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Տ. Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան

Ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն

Ա. Հովսեփյան «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն

Ս. Մելիք-Յուլյան «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ֆինանսական իրավաբանական բաժնի պետ

1. Ծրագրի կառավարման խորհրդատուի մրցույթի շրջանակներում ներկայացված տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների քննարկում և հաստատում

-----  
(Հ. Բեգլարյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հաստատել Ծրագրի կառավարման խորհրդատուի ընտրության տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝

ա. ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանի առաջարկությանը համապատասխան՝ ներկայացնել առավել հիմնավորված տեղեկանք՝ 750 միավորի շեմի սահմանման չափանիշների վերաբերյալ.

բ. 750 միավորի շեմն անցած կազմակերպությունների ներկայացուցիչներին հրավիրել ֆինանսական առաջարկների հրապարակային բացմանը:

2. ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1504-Ն որոշման հիման վրա Ծրագրի բյուջեի պակասեցման հետևանքով Ծրագրի տարեկան ճշգրտված ամփոփ բյուջեի քննարկում և հաստատում

-----  
(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի 2011 թվականի ճշգրտված ամփոփ բյուջեն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1504-Ն որոշմամբ կատարված վերաբաշխումը:

3. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ-ի 2012 թվականի պահպանման ծախսերի, Ծրագրի առաջին և երկրորդ տրանշների ամփոփ բյուջեների հաստատում և գրասենյակային տարածքի տեղափոխման հարցերի քննարկում և հաստատում

-----  
(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին՝ հաշվի առնելով ՀՀ արդարադատության նախարար Հ. Թովմասյանի առաջարկությունը՝ ուսումնասիրել Սարյան 22 հասցեում գտնվող՝ 338.0 քառ. մետր տարածքի պայմանները և ներկայացնել տարածքի հիմնանորոգման ու ներքին հարդարման աշխատանքների ֆինանսական գնահատական.

2) գրասենյակային տարածքի վարձակալության հետ կապված հարցի քննարկումը հետաձգել մինչև ծրագրի կառավարման խորհրդատուի այցը Հայաստան:

4. «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի հաստիքացուցակում փոփոխությունների և թափուր հաստիքների ժամանակավոր համալրման մասին հարցերի քննարկում և հաստատում

-----  
(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1. հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝

1) մինչև մրցութային գործընթացի իրականացումը և հիմնական աշխատողով հաստիքի համալրումը՝ ընդունել աշխատանքի՝

ա. գնումների և պայմանագրերի կառավարման բաժնի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար՝ սահմանված դրույքաչափով,

բ. արհեստական կառույցների մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար՝ սահմանված դրույքաչափով.

2) ՊՈԱԿ-ի աշխատանքների միջև հաղորդակցության, տեղեկատվության փոխանակման և կենտրոնացված տեղեկատվական համակարգ, հանրությանը ծրագրի ընթացքի

մասին տեղեկացնելու, ծրագրի ինտերնետային կայք-էջ ստեղծելու նպատակով ընդունել աշխատանքի SS մասնագետ՝ սահմանված դրույքաչափով.

3) նախատեսել վարորդի լրացուցիչ հաստիք, ֆինանսավորումն իրականացնելով «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ին հատկացված միջոցների հաշվին:

4) ընդունել ի գիտություն՝

ա. ՀՀ ԱԺ-ի պատգամավոր Ա. Մարտիրոսյանի կողմից բարձրացված՝ Ուջանի բնակչության շրջանում առկա դժգոհությունները՝ օտարվող հողերի գնահատման գործընթացում տարբերակված հաշվարկման առկայության հարցը,

բ. ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանի զեկուցումն այն մասին, որ հողերի օտարման գործընթացում, այդ թվում՝ Ուջանի և Ագարակի տարածքներում, ծագած բոլոր հարցերը քննարկվում են ՀՀ օրենսդրության շրջանակներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՆՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ